ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 298-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2023.01.09-2023.01.22 Պաշտոնական հրապարակման օրը 17.01.2023	*Ընդունման վայրը*	Մասիս
Ընդունող մարմինը	Մասիս համայնքի ավագանի	*Ընդունման ամսաթիվը*	23.12.2022
Ստորագրող մարմինը	Համայնքի ղեկավար	*Ստորագրման ամսաթիվը*	23.12.2022
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	18.01.2023	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 298-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով ***Մասիս համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2023 թվականի համախմբված բյուջեն՝

1) եկամուտների գծով՝ 6 093 933 230 դրամ:

2) ծախսերի գծով՝ 6 093 933 230 դրամ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասը՝

1) եկամուտների գծով՝ 4 023 672 200 դրամ:

2) ծախսերի գծով՝ 4 023 672 200 դրամ, նույն թվում բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը՝ 719 385 140 դրամ, որից հատկացում բյուջեի ֆոնդային մասի ծախսերին 700 000 000 դրամ:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի ֆոնդային մասը՝

1) մուտքերի գծով՝ 2 770 261 030 դրամ:

2) ծախսերի գծով՝ 2 770 261 030 դրամ:

4. Հաստատել հատված 1-ով նախատեսված 2023 թվականի համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հավելված 1-ի:

5. Հաստատել հատված 2-ով նախատեսված 2023 թվականի համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման համաձայն հավելված 2-ի:

6. Հաստատել հատված 3-ով նախատեսված 2023 թվականի համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 3-ի:

7. Հաստատել հատված 6-ով նախատեսված 2023 թվականի համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 4-ի:

8. Թույլատրել համայնքի ղեկավարին կատարել փոփոխություն տարվա ընթացքում հաստատված բյուջեի ծախսային ծրագրերի հոդվածների միջև մինչև 15 %-ի չափով:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -17

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐՏԱԿ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՎԱՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

Դեմ -0

Ձեռնպահ -3

ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՀԵ

ԲԱԲԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի 2023 թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով Մասիս համայնքի բնակավայրերի 2022 թ. առկա գործող ծրագրերը, ներկայացված խնդիրները, միաժամանակ կարևորելով համայնքում միավորված բնակավայրերի համաչափ զարգացումը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի

եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Համայնքի 2023 թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

✓ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,

✓ Բարձրացնել վարչական ղեկավարների, համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը,

✓ Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,

✓ Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ,

✓ Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում,

✓ Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը,

✓ Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր,

✓ Ստեղծել հնարավորություններ համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերի բնակիչներին օգտվելու համայնքային ծառայություններից:

Համայնքի 2023 թ. զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, համայնքային ծառայությունների ծավալի մեծացմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2023 թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղություններով:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

Ծախսերի ծրագրի
Բացատրագիր-Հիմնավորում

Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուտներ՝ 6 093 933, 23 հազ. դրամ,

ծախսեր՝ 6 093 933, 23 հազ. դրամ, որից՝

վարչական բյուջեի եկամուտներ՝ 4 023 672 200 դրամ

ծախսեր՝ 4 023 672 200 դրամ /նույն թվում պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե՝ 700 000 դրամ,

ֆոնդային բյուջեի մուտքեր՝ 2 770 261 030 դրամ

ծախսեր՝ 2 770 261 030 դրամ:

1. Եկամուտների կանխատեսում.

Մասիս համայնքի բյուջեի եկամուտները կանխատեսվում է 6 093 933, 23 հազար դրամ, որը գերազանցում է 2022 թվականի նախատեսված բյուջեից 367 518,075 դրամով կամ 6.4 %-ով:

Նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 1 723 787,1 հազ. դրամ՝ 2022 թվականի նախատեսվածից 426 445,7 հազ. դրամով կամ 24,7 %-ով ավելի, իսկ 2021 թվականի փաստացի սեփական եկամուտներից՝ 1 188 183, 2 հազ. դրամով կամ 31 %-ով ավելի:

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները կանխատեսվել են 1 263 273,7 հազ. դրամի չափով կամ 2022 թվականի համար հաստատված ցուցանիշից 448670,0 հազ. դրամով կամ 55 %-ով ավելի:

Հաշվի առնելով ՀՀ Հարկային Օրենսգրքի (օրենսգիրք) 11-րդ բաժնով սահմանված անշարժ գույքի հարկի հարկման բազայի նկատմամբ հարկման գործակիցները և անշարժ գույքի հարկի նախորդ տարիների ապառք նվազումը՝ 2023

թվականին նախատեսված անշարժ գույքի հարկից ստացվող եկամուտները 2022 թվականի հաստատված ցուցանիշից ավել են նախատեսվել 45451.3 հազ. դրամով կամ 19.1 %-ով:

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով նախատեսվում է հավաքագրել 710 720,0 հազար դրամ, որը 2022 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ ավել է 213 720,0 հազար դրամով կամ 43 %-ով:

Տեղական տուրքերի գծով նախատեսվել են 78 929.4 հազ. դրամի մուտքեր, 2022 թվականին նախատեսված 72013.0 հազ. դրամի դիմաց կամ 6916.1 հազ. դրամով կամ 9.6 %-ով ավել:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2023 թվականի համար նախագծով ծրագրվել է 18 000,0 հազ. դրամ՝ 2022 թվականի հաստատված ցուցանիշի չափով, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 3000,0 հազ. դրամ,

- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ

կապված համապատասխան գործարքներից՝ 15000,0 հազ. դրամ:

Պետական տուրքերի մասով նախատեսված ցուցանիշների աճ չի նախատեսվել, նկատի ունենալով վերջին 3 տարիների համեմատական ցուցանիշները:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով հաստատված ցուցանիշները՝ 2023 թվականին ծրագրվել են 2 295 887,1 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, որը 2022 թվականի հաստատված բյուջեից ավել է 481 279,7 հազ. դրամ կամ 26,5 %: Ընդ որում.

- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 3050,4 հազ. դրամ՝ երաժշտական դպրոցների ազգային, լարային նվագարանների ուսուցման ծախսերի փոխհատուցման նպատակով:

1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները ծրագրվել են 464 511,4 հազ. դրամ՝ 2022 թվականի բյուջեով նախատեսված 413 164,98 հազ. դրամի դիմաց կամ 51346.42 հազար դրամով ավել: Ընդ որում.

- Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և գույքի վարձակալությունից ակնկալվող եկամուտները 2023 թվականին ավել է նախատեսվել 27655.79 հազար դրամով 2022 թվականի հաստատված ցուցանիշների համեմատ, որի համար հիմք է հանդիսացել համայնքների միավորումից հետո գույքի վարձակալության փաստացի պայմանագրերի գույքագրումը:

- Տեղական վճարների գծով 2023 թվականին նախատեսվել է 343 883,7 հազ. դրամ՝ 2022 թվականի 304 593,1 հազ. դրամի համեմատ՝ 39 290,6 հազ. դրամով կամ 12.9 %-ով ավել:

- Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է նաև աղբահանության վճարը, որը ծրագրվել է 165 010,0 հազ. դրամի չափով 2022 թվականի նույն ցուցանիշից 4 755,0 հազ. դրամով կամ 3 %-ով ավել 2023 թվականի նկատմամբ:

- համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար և շահագործման թույլտվության ձևակերպման համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 4 000,0 հազ. դրամ:

- Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 640,0 հազ. դրամի մուտքեր:

- Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար նախատեսվել է՝ 154 540,0 հազ. դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական և նկարչական) ծառայություններից օգտվողների համար՝ 17 618,7 հազ. Դրամ ծառայության վճար,

- անասնաբույժի ծառայության դիմաց վճար՝ 75,0 հազ. դրամ,

- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 38 000,0 հազ. դրամ՝ 2022 թվականին հաստատված բյուջեից պակաս է 12 000,0 դրամի չափով, որը պակաս է նախատեսվել հիմք ընդունելով ընթացիկ տարվա փաստացի ցուցանիշի նվազումը:

- Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 5 000,0 հազ. դրամ՝ նախորդ տարվա 12 000,0 հազ. դրամի դիմաց,

- նախատեսվում է նաև բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացումներ ֆոնդային բյուջե 700 000 հազ. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտների 17.4 %-ի չափով կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

2. Ծախսերի կանխատեսում.

Մասիս Համայնքի 2023 թվականի ծախսերը ծրագրվել են ՝ 6 093 933.23 հազ. դրամի չափով:

2023 թվականի ծախսերի ամբողջ ծավալի 54.5 %-ը կամ 3 323 672.2 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ

ծախսերին (ներառված չէ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կապիտալ ծախսերին հատկացումները), 45.5 %-ը կամ 2 770 261 .0 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե),

Մասիս համայնքի 2023 թվականի ծախսերի ծրագրում կապիտալ ելքերից են հանդիսանում Մասիս համայնքի ճանապարհների խճապատման, ճանապարհների ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման, կառուցման աշխատանքները, ծախսը ծրագրվում է 1046704.74 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 17.2 %-ը, փողոցների լուսավորման համակարգի կառուցման ընդլայնման համար նախատեսվում է 1 126 276.18 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 18.4 %-ը, ոռոգման համակարգերի կառուցման և ընթացիկ նորոգումների համար նախատեսվում է 265642.4 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 4.4 %-ը, Համայնքի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և կառուցման համար նախատեսվում է 36042.67 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 0.6 %-ը, Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման համար նախատեսվում է 9970.0 հազար դրամ նախագծերի արժեք, Բնակարանային շինարարության ոլորտին՝ 100582.55 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 1.6 %-ը, ոռոգման ոլորտին՝ 98155.2 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 1.6 %-ը, հանգստի և սպորտի ծառայությունների բնագավառում նախագծերի ձեռք բերման համար նախատեսվում է 330 000.0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 5.4 %-ը, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին՝ 189482.49 հազար դրամ:

Ծրագրով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 20,7 %, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ոլորտին ուղղված ծախսերը՝ 22,0 %, տնտեսական հարաբերություններին 22,6 % և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 7,7 %, հանգիստ, մշակույթ, կրոն 2,1 %, սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղված ծախսերը՝ 1,0 %, օրենսդիր և գործադիր մարմինների պահպանմանը՝ կամ 16.8 % :

Ծրագրով նախատեսվել է պահուստային ֆոնդ 719385.14 հազ. դրամի չափով, որից հատկացումը ֆոնդային բյուջե, կազմում է 700 000.0 հազ. դրամ, որն ամբողջությամբ ուղղվելու է ֆոնդային բյուջեի ծախսերին:

Օրենսդիր և գործադիր մարմինների պահպանում ծրագրով ծախսերը ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով նախորդ և ընթացիկ տարվա ծախսերը: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 1023786.0 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 16.8 %–ը, ինչը 2022 թվականի ճշտված համապատասխան ցուցանիշից ավել է 112565.24 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում ***աշխատավարձի ֆոնդը***՝ 707928.0 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 226-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա՝: ***Պարգևատրման ֆոնդը*** նախատեսվել է 170574.0 հազ. դրամ: ***Էներգետիկ ծառայությունները*** ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2022 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, Մասնավորապես, այս հոդվածով նախատեսվել է 47 000.0 հազ. Դրամ: ***Կոմունալ ծառայությունները*** ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 8 000.0 հազ. դրամի չափով: ***Կապի ծառայությունները*** ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և փոստային ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 6 876.5 հազ. դրամ, ***Ապահովագրական ծախսերը*** նախատեսվել են 1000.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Մասիսի համայնքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: ***Ներքին գործուղումների գծով*** ծախսերի համար նախատեսվել է 500.0 հազ. դրամ, իսկ ***Արտասահմանյան գործուղումների*** գծով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, ընթացիկ տարվա փաստացի ծախսերը, 2023 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 2000.0 հազ. Դրամ հաշվի առնելով կանխատեսվող գործուղումների քանակը: ***Համակարգչային ծառայությունների*** գծով ծրագրվել է 1099.0 հազ. դրամ՝ համակարգչային կառավարման տեղեկատվական համակարգչի սպասարկման, ինտերնետային կայք էջի սպասարկման և հաշվապահական հաշվառման ծրագրի սպասարկման համար: ***Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների*** համար նախատեսվել է 1000.0 հազ. Դրամ: Թերթերի և ամսագրերի ձեռքբերման համար՝ 250.0 հազ. դրամ: ***Ներկայացուցչական ծախսերի*** գծով ծրագրվել է 1000.0 հազ. Դրամ: ***Ընդհանուր բնույթի ծառայությունների*** գծով նախատեսվել է 6200.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի աշխատակազմում փաստաթղթերի կարման և կազմման, ինչպես նաև համայնքապետարանին պատկանող ծառայողական ավտոմեքենաների ավտոլվացման ծառայության համար: ***Մասնագիտական ծառայությունների*** գծով նախատեսվել է 1400.0 հազ. դրամի չափով ծախս՝ հիմնականում համայնքապետարանի և վարչական նստավայրերի ջեռուցման համակարգերի հակահրդեհային ծառայության և գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության համար: ***Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման*** գծով ծրագրվել է 8000.0 հազ. դրամ՝ համայնքապետարանի և վարչական նստավայրերի վարչական շենքերի ընթացիկ նորոգման համար: ***Մեքենաների և***

սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 14000.0 հազ. դրամ՝ որը ներառում է համայնքապետարանի ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: ***Գրասենյակային նյութեր և հագուստ*** հոդվածով ծախսերը ծրագրվել են 11159.0 հազ. դրամ, որը նախատեսվել է հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: ***Տրանսպորտային նյութերը*** ծրագրվել են 16.800.0 հազ. դրամի չափով, որը նախատեսված է համայնքին պատկանող շահագործվող ավտոմեքենաների, ինչպես նաև որոշ բաժինների առանձնահատկություններով պայմանավորված աշխատակիցների անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործմանը հատկացվող վառելիքի համար: ***Կենցաղային և հանրային սննդի ծառայությունների*** գծով նախատեսվել է 4000.0 հազար դրամ՝ որը հիմնականում նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: ***Հատուկ նպատակային այլ նյութերի*** գծով ծրագրվել է 3000.0 հազ. դրամ՝ դրոշների և այլ նյութերի ձեռք բերման համար: ***Այլ նպաստներ բյուջեից*** հոդվածով նախատեսվել է 8000.0 հազ. դրամ, որպես դրամական փոխհատուցում Մասիս համայնքի ավագանու անդամներին: ***Պարտադիր վճարների*** գծով՝ Համայնքի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 1000.0 հազ. դրամ:

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման (պատվիրակված լիազորություններ) ծրագրով ծրագրվել է 5024.0 հազ. դրամ ՔԿԱԳ-ի պահպանման ծախս, որի համար պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորության ծառայության իրականացման համար ծախսերի փոխհատուցում՝ հատկացումները կազմում է 3998.0 հազար դրամ:

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծրագրով նախատեսվել է 407461.050 հազ. դրամ, որը նախատեսված է՝ քաղաքացիների սպասարկման գրասենյակի հերթագրման սարքի ծրագրային սպասարկման համար՝ 504.0 հազար դրամ, լրատվական ծառայությունների ձեռք բերման համար՝ 3000.0 հազար դրամ, ամանորյա տոնական լուսավորման համար՝ 10000.0 հազար դրամ, քաղաքի գլխավոր տոնածառի մոնտաժման և ապամոնտաժման համար՝ 1000.0 հազար դրամ, տրանսպորտային ծառայությունների համար՝ 5000.0 հազար դրամ, ուսանողների տեղափոխող տրանսպորտային ծառայության համար 18000.0 հազար դրամ, համայնքում առկա տեսադիտման սարքերի կարգաբերման ծառայության սպասարկման համար՝ 4800.0 հազար դրամ, նոտարական ծախսերի համար՝ 500.0 հազար դրամ, Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարման նպատակով հողերի սահմանազծերի ակոման ծառայության համար՝ 2000.0 հազար դրամ, պահնորդական ծառայության համար՝ 1440.0 հազար դրամ, Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի քարտեզագրման, չափագրման ծառայությունների համար՝ 13000.0 հազար դրամ, Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գնահատման համար՝ 500.0 հազար դրամ, քաղաքի թարմացված քարտեզի ձեռք բերման համար՝ 800.0 հազար դրամ, համայնքային սեփականության շենքերի, շինությունների սեյսմիկ հետազոտության համար՝ 2000.0 հազար դրամ, Համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային ենթակայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման համար՝ 25000.0 հազար դրամ, Զորակոչի և զորահավաքի ժամանակ Համայնքի կողմից զորակոչիկներին առաջնային անհրաժեշտության պարագաների տրամադրման համար 13000.0 հազար դրամ, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերմանը՝ 2000.0 հազար դրամ, համայնքում ամանորյա տոնական լուսավորման համար նախատեսվել է 30000.0 հազար դրամ, «Մասիսի կոմունալ տնտեսություն և բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ին գերեզմանների սպասարկման և համայնքային շենքերի կառույցների ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսված է հատկացնել սուբսիդիա 73713.0 հազար դրամի չափով, Հայաստանի համայնքների միավորմանը անդամավճար՝ 920.0 հազար դրամ, Ազգային Լեգեոն ՀԿ-ին՝ 600.0 հազար դրամ, այլ հարկեր՝ 100.0 հազար դրամ, պարտադիր վճարներին՝ Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի իրավունքի գրանցման և դատական հայցադիմումների համար 6500.0 հազար դրամ, վարչական սարքավորումների ձեռք բերման համար՝ 1 181 082.49 հազար դրամ, շչակների ձեռք բերմանը՝ 7800.0 հազար դրամ:

3. Գյուղատնտեսության ոլորտում անասնաբույժներին աշխատավարձ՝ 19200.0 հազար դրամ, արտեզյան հորերի պոմպերի էներգետիկ ծախսերի համար՝ 18000.0 հազար դրամ, հակակարկտային կայանի սպասարկման համար՝ 2000.0 հազար դրամ, ագրոքիմիական քարտեզագրման աշխատանքների համար՝ 500.0 հազար դրամ:

4. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով 2023 թվականին նախատեսվել է 167487.2 հազ. դրամ՝ որով նախատեսվում է իրականացնել Արևաբուր, Գեղանիստ, Խաչփար բնակավայրերում ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները:

5. Ճանապարհների վերանորոգում, բարեկարգում և պահպանում ծրագրերով 2023 թվականին նախատեսվել է 1 036734.74 հազ. դրամ:

6. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են 2023-2025 թվականներին տարեկան 800 000.0 հազար դրամի չափով մուտքեր անշարժ գույքի իրացումից:

7. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրին նախատեսվել է 412905.2 հազ. Դրամ՝ աղբահանության վճարների հավաքագրումն իրականացնող պայմանագրային աշխատողների աշխատավարձի և Մասիս համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման համար:

8. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով 2023 թվականին նախատեսվել է 31959.3 հազ. Դրամ Համայնքի կանաչապատ տարածքների խնամքի համար:

9. Թափառող կենդանիների վնասազերծում ծրագրով նախատեսվել է 25000.0 հազ. դրամ՝ համայնքում թափառող կենդանիների վնասազերծումը կազմակերպելու համար:

10. Բազմաբնակարան շենքերի տանիքների և նկուղների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 120 582,55 հազ. դրամ՝ որից տանիքների ընթացիկ նորոգման համար՝ 10000,0 հազար դրամ, նկուղների ջրագծերի և կոյուղագծերի ընթացիկ նորոգման համար՝ 10 000,0 հազար դրամ և թվով 4 շենքերի տանիքների հիմնանորոգման համար՝ 100252,55 հազար դրամ:

11. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 1 621 276,18 հազար դրամ արտաքին լուսավորության ցանցի պահպանման և ընդլայնման համար, որից էներգետիկ ծախսերի համար՝ 70 000,0 հազար դրամ, ցանցի սպասարկման պահպանման համար 25000,0 հազար դրամ և վարչական բնակավայրերում լուսավորության ցանցի ընդլայնման համար՝ 1 525 616,18 հազար դրամ:

12. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 6830,0 հազար դրամ, որից համայնքում առկա այգիների և խաղահրապարակների ընթացիկ նորոգման համար 1500,0 հազար դրամ, սպորտի բնագավառում տարվա ընթացքում լավագույն ցուցանիշներ ձեռք բերած մարզիկներին և մարզիչներին պարգևատրելու համար 5000,0 հազար դրամ, նախագծա-նախահաշվային աշխատանքների համար 330.0 հազար դրամ:

13. Գրադարանային ծառայություններ ծրագրով 2023 թվականին նախատեսվել է 55034,0 հազար դրամ «Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ»-ին սուբսիդիա տրամադրելու համար:

14. Այլ մշակութային միջոցառումների կազմակերպում ծրագրով 2023 թվականին նախատեսվել է 62500,0 հազ. Դրամ, որը նախատեսվում է համայնքում միջոցառումների անցկացման համար:

15. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 1032442.67 հազ. դրամ՝ ,որից համայնքում գործող 26 նախադպրոցական հիմնարկներում հաճախող 2226 երեխաների պահպանման ծախսերին կհատկացվի սուբսիդիա 996400.0 հազար դրամ, բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով երեխայի սննդի նորմատիվի պահպանումը՝ յուրաքանչյուրին օրական 450 դրամ հաշվարկով: Ծրագրվում է նաև Դաշտավանի մանկապարտեզի տարածքի բարեկարգում և ցանկապատում, որի համար ֆոնդային բյուջեից կհատկացվի 35712,67 հազար դրամ:

16. Միջնակարգ կրթության ծրագրով նախատեսվում է 10000,0 հազ. դրամ՝ համայնքում գործող հանրակրթական դպրոցներին աջակցություն տալու նպատակով:

17. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել 219690.0 հազ. դրամ: Ծրագիրը ներառում է համայնքի ենթակայության երաժշտական, սպորտի, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի և գեղարվեստի դպրոցների սուբսիդավորումը:

18. Սոցիալական հատուկ արտոնություններ ծրագրով նախատեսվում է 58300,0 հազար դրամ, որից սոցիալապես անապահով ընտանիքների հուղարկավորության նպաստների համար 8000,0 հազար դրամ, այլ նպաստներին 42000,0 հազար դրամ, ուսման վարձերի փոխհատուցման համար 6500,0 հազար դրամ, համայնքում գործող « Առաքելություն Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացվող բարեգործական ճաշարանին նվիրատվություն՝ 1200,0 հազար դրամ, Կարմիր խաչին՝ 600,0 հազար դրամ:

Պահուստային ֆոնդը նախատեսվում է 719385.14 հազար դրամ, որից հատկացում ֆոնդային բյուջե 700000,0հազար դրամ:

Տարեսկզբի ազատ մնացորդ է կանխատեսվում 1400000.0 դրամի չափով, որը կճշգրտվի 2022 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո և կներառվի բյուջեի եկամուտներում և ծախսերում:

Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի նախագիծը 2022 թվականի դեկտեմբերի 12-ին ներկայացվել է հանրային քննարկման: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է Մասիս համայնքի պաշտոնական կայքում:

Այսպիսով, Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *եկամուտների գծով՝* ***6093933.23*** *հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝* ***6093933.23*** *հազ. Դրամ:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. Համբարձումյան**

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի
Մասիս համայնքի ավագանու
«23» «դեկտեմբեր» 2022 թ.
Թիվ 298-Ն որոշման

Հավելված 2
ՀՀ Արարատի մարզի
Մասիս համայնքի ավագանու
«23» «դեկտեմբեր» 2022 թ.
Թիվ 298-Ն որոշման

Հավելված 3
ՀՀ Արարատի մարզի
Մասիս համայնքի ավագանու
«23» «դեկտեմբեր» 2022 թ.
Թիվ 298-Ն որոշման

Հավելված 4
ՀՀ Արարատի մարզի
Մասիս համայնքի ավագանու
«23» «դեկտեմբեր» 2022 թ.
Թիվ 298-Ն որոշման

Պաշտոնական հրապարակման օրը՝ 17 հունվարի 2023 թվական: